

4.4. Ապրանքների արտահանում և ներմուծում

4.4.1. Արտաքին առևտուր

Արտաքին առևտրաշրջանառությունը և աշխարհագրությունը. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2001թ. հունվար-ապրիլին, փաստացի գներով, կազմել է 193186.8 մլն. դրամ կամ 351.5 մլն. դոլար, այդ թվում՝ ապրանքների արտահանումը՝ 54450.4 մլն. դրամ (99.1 մլն. դոլար) և ներմուծումը՝ 138736.4 մլն. դրամ (252.4 մլն. դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 84286 մլն. դրամով (153.3 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնության կարգով ստացված բեռների՝ 80982 մլն. դրամով (147.3 մլն. դոլարով):

2001թ. հունվար-ապրիլին, 2000թ. հունվար-ապրիլի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալը նվազել է 3%-ով: Ընդ որում, արտահանումն աճել է 21.1%-ով, իսկ ներմուծումը նվազել է 10%-ով: Բացասական առևտրային հաշվեկշիռը նվազել է 22.8%-ով:


2001թ. ապրիլին արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 52548.3 մլն. դրամ (95.9 մլն. դոլար), որից արտահանումը՝ 12240.5 մլն. դրամ (22.4 մլն. դոլար), իսկ ներմուծումը՝ 40307.8 մլն. դրամ (73.5 մլն. դոլար): 2001թ. ապրիլին մարտի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալը նվազել է 0.6%-ով, ընդ որում՝ արտահանումը նվազել է 29.9%-ով, իսկ ներմուծումն աճել է 13.8%-ով:

2001թ. հունվար-ապրիլին ԱՊՀ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 54801.9 մլն. դրամ (99.6 մլն. դոլար) կամ ընդհանուր ապրանքաշրջանառության 28.4%-ը (2000թ. հունվար-ապրիլին՝ 22.2%), իսկ այլ երկրների հետ՝ 138384.9 մլն. դրամ (251.8 մլն. դոլար) կամ 71.6%-ը (2000թ. հունվար-ապրիլին՝ 77.8%), որից Եվրոմիության (ԵՄ) երկրների հետ՝ 51038.4 մլն. դրամ (92.9 մլն. դոլար) կամ 26.4%-ը (2000թ. հունվար-ապրիլին՝ 45.2%):


2001թ. հունվար-ապրիլին ԱՊՀ երկրներ են արտահանվել 18604.9 մլն. դրամի (33.8 մլն. դոլարի) և ներմուծվել՝ 36197 մլն. դրամի (65.8 մլն. դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 17592.2 մլն. դրամով (32 մլն. դոլարով): Նույն ժամանակաշրջանում այլ երկրներ են արտահանվել 35845.5 մլն. դրամի (65.2 մլն. դոլարի), իսկ ներմուծվել՝ 102539.4 մլն. դրամի (186.6 մլն. դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 66693.9 մլն. դրամով (121.3 մլն. դոլարով):

2000թ. հունվար-ապրիլի համեմատ 2001թ. հունվար-ապրիլին ապրանքների արտահանումն ԱՊՀ երկրներ աճել է 71 %-ով: Արտահանումը դեպի այլ երկրներ աճել է 5.2%-ով: Ներմուծման ծավալը ԱՊՀ երկրներից աճել է 8.2%-ով, իսկ այլ երկրներից՝ նվազել՝ 15%-ով:

Արտահանման և ներմուծման ծավալները 2000 և 2001թթ. հունվար-ապրիլին, ըստ ԱՊՀ և այլ երկրների
Արտահանում (մլն. դոլար)



Ներմուծում (մլն. դոլար)



Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը 2001թ. հունվար-ապրիլին, ըստ առանձին երկրների

Երկրի անվանումը	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Առևտրային հաշվեկշիռը հազ. \$
	արժեքը		տեսակ. կշիռը	արժեքը		տեսակ. կշիռը	
	մլն. դրամ	հազ. \$		մլն. դրամ	հազ. \$		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	54450.4	99092.7	100.00	138736.4	252364.9	100.0	-153272.22
որից՝							
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	18604.9	33840.1	34.15	36197.0	65798.9	26.07	-31958.72
այդ թվում՝							
Ռուսաստան	10420.2	18966.0	19.14	30968.9	56276.6	22.30	-37310.65
Թուրքմենստան	363.6	664.7	0.67	23.9	43.3	0.02	621.33
Վրաստան	5003.0	9079.9	9.16	2025.2	3689.7	1.46	5390.26

4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Երկրի անվանումը	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Առևտրային հաշվեկշիռը հազ.Տ
	արժեքը		տեսակ. կշիռը	արժեքը		տեսակ. կշիռը	
	մլն. դրամ	հազ. \$		մլն. դրամ	հազ. \$		
Բելուռուս	120.1	218.8	0.22	140.1	255.3	0.10	-36.54
Ուկրաինա	2083.1	3792.8	3.83	2815.6	5128.0	2.03	-1335.18
Ղազախստան	254.1	462.2	0.47	83.8	152.1	0.06	310.17
Այլ երկրներ	360.8	655.8	0.66	139.6	253.9	0.10	401.89
Այլ երկրներ այդ թվում՝							
ԵՄ երկրներ	12673.3	23076.2	23.29	38365.1	69806.9	27.66	-46730.75
Բելգիա	6791.7	12362.0	12.48	8734.3	15887.5	6.30	-3525.52
Ֆրանսիա	123.4	224.5	0.23	2131.2	3885.0	1.54	-3660.48
Գերմանիա	1755.3	3197.9	3.23	4148.3	7555.1	2.99	-4357.27
Իտալիա	633.5	1152.7	1.16	5108.9	9286.7	3.68	-8134.08
Նիդերլանդներ	420.6	768.2	0.78	1155.7	2101.7	0.83	-1333.52
Մեծ Բրիտանիա	2230.0	4061.6	4.10	11240.6	20439.7	8.10	-16378.02
Հունաստան	651.2	1185.9	1.20	3236.0	5896.3	2.34	-4710.43
Լյուքսեմբուրգ	0.0	0.0	0.00	467.4	848.2	0.34	-848.16
Այլ երկրներ	67.5	123.4	0.12	2142.6	3906.7	1.55	-3783.28
Շվեյցարիա	1539.3	2799.5	2.83	6193.7	11286.2	4.47	-8486.68
Իրան	4173.3	7594.6	7.66	14050.1	25539.5	10.12	-17944.92
Իսրայել	4888.4	8896.7	8.98	4273.2	7771.3	3.08	1125.44
Թուրքիա	232.3	421.0	0.42	4856.1	8851.2	3.51	-8430.19
Միաց.Արաբ. Էմիրություններ	737.3	1344.2	1.36	7142.1	12994.1	5.15	-11649.86
ԱՄՆ	7918.7	14418.6	14.55	12004.5	21828.5	8.65	-7409.91
Կիպրոս	389.9	708.9	0.72	1163.2	2114.6	0.84	-1405.73
Այլ երկրներ	3293.0	5992.8	6.05	14491.3	26373.7	10.45	-20380.89

2001թ. հունվար-ապրիլին արտահանման ծավալի 34.2%-ն ուղղվել է ԱՊՀ երկրներ (այդ թվում 19.14%-ը՝ Ռուսաստանի Դաշնություն, 9.16%-ը՝ Վրաստան և 5.8%-ը՝ ԱՊՀ մյուս երկրներ), 66.8%-ն աշխարհի այլ երկրներ, այդ թվում 23.3%-ը՝ ԵՄ երկրներ (որից 12.5%-ը՝ Բելգիա, 3.2%-ը՝ Գերմանիա, 4%-ը՝ Մեծ Բրիտանիա), 7.7%-ը՝ Իրան և 14.55%-ը՝ ԱՄՆ:

Ներմուծման ծավալի 26.1%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին (որից 22.3%-ը՝ Ռուսաստանի Դաշնությանը), իսկ 73.9%-ը՝ աշխարհի այլ երկրներին, այդ թվում 27.7%-ը՝ ԵՄ երկրներին (որից 6.3%-ը՝ Բելգիային, 8.1%-ը՝ Մեծ Բրիտանիային), 8.65%-ը՝ ԱՄՆ-ին և 10.12%-ը՝ Իրանին:

**Արտահանման և ներմուծման ծավալներն ըստ
ՀՀ մարզերի և Երևան քաղաքի¹, 2001թ. հունվար-ապրիլին**
(ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, առանց ֆիզիկական անձանց կողմից կազմակերպված առևտրի տվյալների)

Մարզի /քաղաքի անվանում	Արտահանում			Ներմուծում		
	արժեքը		տեսակ. կշիռը, %-ով	արժեքը		տեսակ. կշիռը, %-ով
	մլն.դրամ	հազ. \$		մլն.դրամ	հազ. \$	

¹ Արտահանման և ներմուծման ծավալների բաշխումը մարզերի իրականացվել է ըստ կազմակերպությունների տնտեսական գործունեության իրականացման վայրի՝ ՀՀ պետականուտների նախարարությունից ստացված տեղեկատվության հիման վրա:

4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Մարզի /քաղաքի անվանում	Արտահանում			Ներմուծում		
	ա ռ ժ ե ք ը		տեսակ. կշիռը, %-ով	ա ռ ժ ե ք ը		տեսակ. կշիռը, %-ով
	մլն.դրամ	հազ. \$		մլն.դրամ	հազ. \$	
Ընդամենը	52939	96337	100	132491	240980	100.0
ք.Երևան	32096.8	58398.3	60.62	103663.9	188537.1	78.24
Արագածոտն	36.2	65.9	0.07	167.6	304.7	0.13
Արարատ	1149.5	2091.5	2.17	1441.6	2623.3	1.09
Արմավիր	283.2	516.3	0.54	900.1	1640.5	0.68
Շիրակ	153.2	278.4	0.29	2197.4	4003.4	1.66
Վայոց Ձոր	93.7	170.6	0.18	312.1	567.2	0.24
Տավուշ	82.4	149.8	0.16	85.2	156.1	0.06
Սյունիք	3304.6	6022.8	6.25	5718.6	10390.6	4.31
Գեղարքունիք	341.3	621.4	0.65	502.4	913.5	0.38
Լոռի	3074.9	5591.0	5.80	2052.7	3733.9	1.55
Կոտայք	12323.8	22430.5	23.28	15449.8	28109.7	11.66

2001թ. հունվար-ապրիլի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 73.2%-ը (արտահանումը՝ 60.62%, ներմուծումը՝ 78.24%) իրականացվել է Երևան քաղաքում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից, 15%-ը՝ Կոտայքի մարզի, 4.9%-ը՝ Սյունիքի մարզի կազմակերպությունների կողմից: Հանրապետության մյուս մարզերում արտաքին առևտրաշրջանառության տեսակարար կշիռը չի գերազանցել 3%-ը:

Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը

Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը , ըստ առանձին ապրանքախմբերի, 2001թ. հունվար-ապրիլին

	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Հաշվե-կշիռը, հազ. \$
	ա ռ ժ ե ք ը		տեսակ. կշիռը, %-ով	արժեքը		տեսակ. կշիռը, %-ով	
	մլն.դրամ	Հազ. \$		մլն. դրամ	Հազ. \$		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	54450.4	99092.7	100.00	138736.4	252364.9	100.00	-153272.2
այդ թվում՝							
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	371.3	678.0	0.68	5242.1	9541.0	3.78	-8863.0
Բուսական ծագման արտադրանք	67.3	122.4	0.12	14132.3	25726.5	10.19	-25604.1
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.0	0.0	0.00	3268.4	5948.7	2.36	-5948.7
Պատրաստի սննդի արտադրանք	8299.7	15108.1	15.25	11518.5	20954.4	8.30	-5846.3
Հանքահումքային արտադրանք	6960.2	12649.0	12.76	31851.3	57808.8	22.91	-45159.9
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	361.0	657.2	0.66	7855.4	14301.4	5.67	-13644.2
Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր	2897.6	5275.3	5.32	3945.4	7180.6	2.85	-1905.3
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	263.9	478.6	0.48	2271.1	4138.0	1.64	-3659.4
Փայտ և փայտյա իրեր	110.9	201.7	0.20	797.2	1452.1	0.58	-1250.5
Թուղթ և թղթից իրեր	37.9	68.9	0.07	2654.3	4832.5	1.91	-4763.6
Մանածագործական իրեր	2470.9	4497.4	4.54	5484.4	9978.6	3.95	-5481.2
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	54.9	99.6	0.10	938.3	1713.1	0.68	-1613.4
Իրեր քարից, գիպսից,ցեմենտից	356.7	652.0	0.66	2181.1	3971.0	1.57	-3319.1
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	18991.2	34559.2	34.88	15897.7	28903.2	11.45	5655.9

4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			
	ա Ր Ժ Ե Զ Ղ			արժեքը			
	մլն.դրամ	Հազ. \$		մլն. դրամ	Հազ. \$		
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	7245.6	13188.6	13.31	4602.5	8392.5	3.33	4796.1
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	5012.4	9130.1	9.21	13567.5	24709.2	9.79	-15579.0
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	235.8	429.4	0.43	4223.7	7697.5	3.05	-7268.2
Սարքեր և ապարատներ	579.4	1054.6	1.06	6513.5	11855.6	4.70	-10801.0
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	92.3	167.0	0.17	1791.1	3258.8	1.29	-3091.8
Արվեստի ստեղծագործություններ	41.5	75.6	0.08	0.7	1.2	0.00	74.4

2001թ. հունվար-ապրիլին հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 34.9%-ը կազմել են մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը, 13.31%-ը՝ ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը, 12.76%-ը՝ հանքահումքային արտադրանքը, 15.25%-ը՝ պատրաստի սննդի արտադրանքը: Ներմուծման մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմել սննդի արդյունաբերության, կենդանական և բուսական ծագման արտադրանքը՝ 24.64%, հանքահումքային արտադրանքը՝ 22.91%, մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը՝ 11.45%, մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները՝ 9.79%:

2001թ. հունվար-ապրիլին առևտրային հաշվեկշիռը դրական է միայն չորս ապրանքախմբերի գծով, հիմնականում՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի խմբում՝ 4796.1 հազ. դոլար, թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնի, ոսկերչական իրերի խմբում՝ 5655.9 հազ.դոլար: Իսկ մնացած ապրանքախմբերում առևտրային հաշվեկշիռը բացասական է: Միայն սննդամթերքի գծով բացասական առևտրային հաշվեկշիռը կազմել է 46262 հազ. դոլար, հանքահումքային արտադրանքի գծով՝ 45159.9 հազ. դոլար:

Արտահանման և ներմուծման ծավալների աճերի տեմպերն ըստ ապրանքախմբերի

	Արտահանում			Ներմուծում		աճի տեմպը (%)
	2000թ. հունվար-ապրիլ, հազ. \$	2001թ. հունվար-ապրիլ, հազ. \$	աճի տեմպը (%)	2000թ. հունվար-ապրիլ, հազ. \$	2001թ. հունվար-ապրիլ, հազ. \$	
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	81841.2	99092.7	121.08	280409.0	252364.9	90.00
այդ թվում՝						
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	79.8	678.0	849.45	11391.4	9541.0	83.76
Բուսական ծագման արտադրանք	230.7	122.4	53.05	34006.4	25726.5	75.65
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.3	0.0	~	6076.5	5948.7	97.90
Պատրաստի սննդի արտադրանք	6779.4	15108.1	222.85	18568.6	20954.4	112.85
Հանքահումքային արտադրանք	10297.3	12649.0	122.84	58409.9	57808.8	98.97
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1698.0	657.2	38.71	27384.1	14301.4	52.23
Պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	1028.7	5275.3	512.83	4940.0	7180.6	145.36
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	433.3	478.6	110.44	370.0	4138.0	1118.51
Փայտ և փայտյա իրեր	125.4	201.7	160.81	1391.5	1452.1	104.36
Թուղթ և թղթից իրեր	67.9	68.9	101.49	8011.1	4832.5	60.32
Մանածագործական իրեր	3140.2	4497.4	143.22	7639.5	9978.6	130.62

4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

	Արտահանում			Ներմուծում		աճի տեմպը (%)
	2000թ. հունվար-ապրիլ, հազ. \$	2001թ. հունվար-ապրիլ, հազ. \$	աճի տեմպը (%)	2000թ. հունվար-ապրիլ, հազ. \$	2001թ. հունվար-ապրիլ, հազ. \$	
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	225.8	99.6	44.12	1053.0	1713.1	162.68
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	195.1	652.0	334.20	2730.3	3971.0	145.44
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	38668.1	34559.2	89.37	38889.0	28903.2	74.32
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	12078.7	13188.6	109.19	5386.7	8392.5	155.80
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	5199.3	9130.1	175.60	35935.3	24709.2	68.76
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	735.0	429.4	58.42	9186.9	7697.5	83.79
Սարքեր և ապարատներ	636.3	1054.6	165.74	4721.1	11855.6	251.12
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	161.2	167.0	103.59	4317.8	3258.8	75.47
Արվեստի ստեղծագործություններ	60.5	75.6	124.91	0.1	1.2	1195.96

2000թ. հունվար-ապրիլի համեմատ աճել են հիմնականում պատրաստի սննդի արտադրանքի (2.2 անգամ), պլաստմասսայի և դրանցից իրերի, կաուչուկի և ռետինե իրերի (5.1 անգամ), մեքենաների և սարքավորումների (1.8 անգամ) ապրանքախմբերի արտահանման ծավալները: Միևնույն ժամանակ, 61.3%-ով նվազել են քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի, 10.6 %-ով՝ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի արտահանումը:

2000թ. հունվար-ապրիլի համեմատությամբ 12.8%-ով աճել են պատրաստի սննդի արտադրանքի, 30.6%-ով՝ մանածագործական իրերի, 55.8%-ով՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի ներմուծումը: Միևնույն ժամանակ, 25.7%-ով նվազել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, 16.2%-ով՝ վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցների, 47.8%-ով՝ քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի, 24.3%-ով՝ բուսական ծագման արտադրանքի ներմուծումը: